ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի ուսուցումը 8-րդ դասարանում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիանա Հովասաֆյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Խնածախի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

Գորիս 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի թեմայի **արդիականությունը** պայմանավորված է կրթության ու գիտության ժամանակակից հիմնախնդիրների հետ ունեցած որոշակի առնչություններով: Այս առումով մենք կարևորում ենք հայ արձակագրության մեջ ուրույն տեղն ունեցող ստեղծագործություններից մեկի՝ «Ես և նա»-ի ուսուցման որոշ, մեր կարծիքով, ուշագրավ խնդիրներն արծարծելը: Աշխատանքի **նպատակն է** ներկայացնել «Ես և նա»-ի ուսումնասիրման և ուսուցման հետ կապված գիտական ու մեթոդական մի քանի մոտեցումներ՝ **առաջարկելով** ստեղծագործության կառուցվածքը և բովանդակությունն ուսումնասիրելու և միջին դպրոցում այն ուսուցանելու հնարավոր տարբերակ:

Հետազոտության օբյեկտը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի ուսուցումն է միջին դպրոցում, իսկ **առարկան**՝ կրթական տվյալ աստիճանի սովորողների մեջ ստեղծագործական գաղափարների և միտումների զգացական ուղիներով ընկալման առանձնահատկություններն են:

Հետազոտությունն իրականացրել ենք դիտման, զրույցի, թեստավորման, փորձարարական ուսուցման, սովորողների գործունեության արդյունքների վերլուծության **մեթոդները**:

***

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքը հայ գրականության լավագույն երկերից է, որում հակադրվում են իրականության հարվածները չհաղթահարած ու կործանվող անհատը և հուսահատությունն ու վհատությունը հզորության վերածող, հատակից բարձրացող շնորհաշատ երիտասարդը, որը հաղթահարում է «վերևի» և «ներքևի» տարբերությունները՝ գրավելով արվեստի բարձունքները: Ուժեղ և թույլ մարդկանց մասին պատմող գեղեցիկ պատմվածք է «Ես և նա»-ն, որում խոսվում է մարդու՝ կյանքի դժվարությունների դեմ պայքարելու կամքի տարբեր դրսևորումների մասին: Ուստի պատմվածքում ոչ թե պետք է գտնել հերոսների արարքների ճիշտը կամ սխալը, այլ պետք է դասեր քաղել հերոսների անձնական փորձից, խորհել, թե ինչպես կվարվեինք մենք այդպիսի իրավիճակներում:

Պատմվածքում բազմապլանային ձևով բարձրացված են և՛ գեղագիտական, և՛ բարոյական ընդգրկուն խնդիրներ, որոնք իրենց արդիական հնչեղությամբ այսօր էլ ուսանելի շատ բան տալիս: Հուզական ներգործուն խոսքը հնարավորություն է ընձեռում նրանում արտահայտված գաղափարները, միտումները զգայական ընկալման ուղիով հասցնել դեռահասների գիտակցությանը. այս սկզբունքով պետք է ընթանա «Ես և նա» պատմվածքի ուսուցումը:

Թեմայի ուսուցման նպատակներն են՝

- գաղափար տալ ժամանակաշրջանի, գրողի գործունեության և թեմատիկայի մասին,
- տարանջատել սյուժեի մասերը,
- բացահայտել կերպարների խառնվածքները,
- հետևել նրանց արարքների տրամաբանությանը, սիրո ընկալման տարբերություններին,
- բացահայտել իմաստի անհատական ընկալումները, կերպարների սիրո դրսևորումները ժամանակաշրջանի ֆոնի վրա, հերոսների արարքների դրդապատճառները և հոգեբանական դրսևորումները, միջավայրին դեմ կանգնելու, նրանից բարձրանալու գաղափարը, կերպարների ընդհանրությունները և տարբերությունները,
- հիմնավորել սեփական տեսակետը պատմվածքից բերված օրինակներով:

Մինչ պատմվածքի ուսուցմանն անցնելը ուսուցիչը աշակերտների հետ վարում է նախապատրաստական զրույց՝ ծանոթացնելով գրողի աշխարհայացքին, կենսագրության առանձին էջերին և ապրած ժամանակաշրջանին: Այդ նպատակով կարելի է օգտագործել և՛ ինքնակենսագրական առանձին նյութեր, և՛ ժամանակակիցների ու հետնորդների՝ Նար-Դոսի մասին թողած հիշողություններն ու ասույթները: Ներկայացվում են հատվածներ Նար-Դոսի «Իմ կենսագրությունը» մեմուարային ստեղծագործությունից, որոնք կարող է օգտագործվել նաև նախապատրաստական զրույցի ընթացքում:

Ինքնակենսագրական նյութերից ընտրված հատվածները ինքնանպատակ չեն կարդացվում: Աշակերտների ուշադրությունը հրավիրվում է այն փաստին, որ Նար-

Դոսի սիրելի հեղինակներն են եղել Ռաֆֆին, Գոնչարովը, Տուրգենևը: Հետևաբար այդ գրողների առաջադիմական, ազատագրական ձգտումներն ու ընդվզող հոգին հարազատ են նաև Նար-Դոսին:

Լինելով անչափ համեստ և զգայուն անձնավորություն՝ Նար-Դոսը լուսավոր մի հավատով կյանքի բոլոր գեղեցկությունները կապում էր աշխատավոր մարդկանց հետ: Նրանց մեջ տեսնում էր անձնվիրություն, հաստատակամություն, անկաշառ սեր և հպարտություն: Բարոյական այս բարձր հատկանիշների հանրագումարը դրսևորվում է նրա ստեղծագործություններում: Ճշմարիտ արվեստի ուժով հեղինակը դատապարտում է քաղքենիական ճղճիմ ու անհոգի, փառատենչ ու սնանկ միջավայրը: Նա բարձրացնում է հոգեկան գեղեցկությունն ու ազնիվ լավատեսության անհրաժեշտ խնդիրներ՝ դրանք որոնելով իր շրջապատի մարդկանց մեջ:

Առաջին դասաժամի ընթացքում նախապատրաստական զրույցից հետո դասարանում ընթերցվում է նաև «Ես և նա» պատմվածքի առաջին մասը, իսկ ամբողջական ընթերցումը կատարվում է տանը: Անհրաժեշտ է պլանավորել աշխատանքը՝ ըստ նյութի ուսուցմանը հատկացված ժամերի քանակի:

1-ին դասաժամ- Ներածական զրույց հեղինակի կենսագրության և ստեղծագործության շուրջ: Ծանոթություն «Ես և նա» պատմվածքի կառուցվածքին: Առաջին մասի արտահայտիչ ընթերցում:

Տնային հանձնարարություն՝ ամբողջովին կարդալ պատմվածքը, ուսումնասիրել Նար-Դոսի կենսագրության համառոտ ակնարկը: Կարդալ «Իմ կենսագրությունը» փոքրիկ հիշողությունը, անհրաժեշտ հատվածները գրել գրականության տետրերում:

2-րդ դասաժամ- ստուգել տնային հանձնարարությունը: Պատմվածքի առաջին մասը կարդալ մեկնաբանություններով: Բնութագրել **Ես**-ի կերպարը, ուշադրություն հրավիրել հեղինակային բնութագրումների, հոգեկան հակադիր ապրումների, գեղարվեստական խոսքի առանձնահակտկությունների վրա:

Տնային հանձնարարություն՝ Գրականության տետրում դուրս գրել հերոսի հոգեվիճակը բնութագրող, հակադիր, իրամերժ զգացումներ պարունակող հատվածները, գնահատել և բացատրել հոգեբանական փոփոխությունները մեկ-երկու բառով: Պատրաստել բանավոր շարադրություն՝ «**Ես**-ը՝ իմ պատկերացմամբ»:

3-րդ դասաժամ - Տնային հանձնարարության կատարողականի ստուգում Ջուլիետտայի և Անտոնիոյի կերպարները: Ես-ի և նա-ի համեմատական բնութագիրը: Բնության, գեղեցիկ զգացմունքների ու գեղարվեստական խոսքի ներդաշնակության դրսևորումը: Հատվածների ընթերցում մեկնաբանություններ:

Տնային առաջադրանք՝ գրականության տետրում դուրս գրել գլխավոր հերոսներին բնութագրող հատվածներ, բնության պատկերներ, պատկերավոր բնութագրումներ (առաջադրանքը տրվում է տարբերակներով): Առաջադրվում է նաև վերնագրել առանձին հատվածներ:

Հանձնարարվում է կարդալ լրացուցիչ ընթերցանության համար նախատեսված Դ. Դեմիրճյանի «Ջութակ և սրինգ» պատմվածքը:

4-րդ դասաժամ- Դասն ընթանում է բանավեճի ձևով: Դասի ընթացքում օգտագործվում են զուգահեռ վերլուծության եղանակներ (համեմատություն և հակադրություն՝ Ես, Նա (Անտոնիո), Ջուլիետտա, «Ես և նա»)), Լևոն («Արտիստը») Հայանթի և Նալ («Ջութակ և սրինգ») կերպարների միջև: Մեկնաբանվում և արդարացվում կամ դատապարտվում են հերոսների գործողությունները: Բացահայտվում է պատմվածքի գաղափարը, հեղինակի միտումը: Այս ընթացում կատարվում է նաև տեքստային աշխատանք (ամեն մի մեկնաբանություն, բնութագրում ուղեկցվում է տեքստային կոնկրետ մեջբերումով):

Այսպիսի դասաժամերի բաշխումը կողմնորոշիչ է և պայմնանավորված է դասարանի աշակերտների պատրաստվածության, ուսուցչի աշխատանքի նպատակով: Պատմվածքի մասին ամբողջական պատկերացում ստանալու և Ես-ի ու Նա-ի կերպարների համեմատական բնութագիրը կազմելու համար աշակերտները պարտադիր պետք է կարդան նաև պատմվածքի առաջին մասը՝ «Ես»-ը:

Այսպիսով, աշակերտները հնարավորություն են ստանում դուրս գալու դասագրքի շրջանակներից, ինքնուրույն մոտեցում են հանդես բերում համեմատելու պատմվածքի երկու հատվածները, զուգահեռներ անցկացնելու նրանց մեջ: Պատմվածքի կառուցվածքը հենց սկզբից հետաքրքրություն է առաջացնում աշակերտների մեջ: Մինչև «Ես և նա»-ն նրանք չեն ուսումնասիրել նմանատիպ կառուցվածք ունեցող գրական ստեղծագործություն: Ուսուցիչը կամ որևէ լավ ընթերցող աշակերտ կարդում է պատմվածքի նախաբանը:

Առաջին տպավորությունը, որ ստանում են աշակերտները, պատմվող նյութի հավաստի, ճշմարտացի լինելն է: Հեղինակը հանդես է գալիս ներկայացնողի դերում, և նրա պատմությունը այդպես էլ կոչվում է՝ «Մի կորած մարդու հիշատակարանից»: Իսկ ինչո՞ւ «կորած մարդ», ի՞նչ «տրագեդիայի» մասին է խոսքը. սրանք խնդիրներ են, որ շարժում են աշակերտների միտքը, հետաքրքրություն առաջացնում պատմվող նյութի հետագա ընթացքի մասին:

«Ես և նա» պատմվածքում հեղինակն ինքը չի պատմում, այլ ներկայացնում է հերոսներից մեկի օրագիրը: Նա դարձել է գեղարվեստական կերպար, որը պատմում է, նկարագրում դեպքերը: Այդ կերպարը Ես-ն է: Բայց պատմվածքում կա նաև մեկ ուրիշ պատմություն, որ ընթերցողին ներկայացնում է Ես-ը: Ահա թե ինչ է ասում նա այդ մասին. «Այս ուղղությամբ կատարած պրպտումներս մտատանջում էին ինձ առանց որևէ եզրակացության հանգելու, մինչև որ միանգամայն պատահական կերպով գտա բուն արմատը մի պատմվածքի ընթերցումից հետո, որը հանկարծ լուսավորեց իմ՝ մինչ այդ մութ ներքին աշխարհը:

Այդ պատմվածքն իտալական մի սիրավեպ էր «Վրեժ» վերնագրով: Այստեղ բառացի առաջ եմ բերում այդ սիրավեպը, որի վերնագիրը, սակայն, դնում եմ «Նա»՝ պատմվածքի հերոսին ինձհակադրելու համար»[1]:

Սա մի եկրորդ պատմություն է: Ինչպես հեղինակն է ներկայացնում «Կորած մարդ» օրագիրը, այնպես էլ «Կորած մարդը» ներկայացնում է «Նա» պատմվածքը, որի մեջ ինքը հանդես չի գալիս: Դեպքերի ընթացքը շարադրվում է հեղինակային խոսքի միջոցով, և դեպքերի զարգացմանը զուգընթաց՝ զարգանում են նաև հերոսների կերպարները, էջ առ էջ բացվում են նրանց բնավորության նոր կողմերը: Պատմություն՝ պատմության մեջ. այսպես կարելի է կոչել պատմվածքի կառուցվածքը: Ես-ի պատմությունը անկեղծ զրույց է, անկեղծ խոստովանություն՝ հոգեբանական իրամերժ փոփոխություններով: Աշակերտները տեքստից կարդում են այն հատվածները, որոնցում երևում է հերոսն իր հոգեկան աշխարհի տարբեր ելևէջներով: Տեքստային աշխատանքը կատարվում է այսպես. գրվում կամ կարդացվում է անհրաժեշտ հատվածը, աշակերտը ինքնուրույն գուշակում է կոնֆլիկտի հիմքը: Իսկ կոնֆլիկտը պատմվածքի առաջին մասում և՛ արտաքին է, և՛

[1] Նար-Դոս, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1977, էջ 101:

ներքին: Ներքին բախումն արտահայտվում է սիրած աղջկանից խաբվելու հետևանքով հերոսի հոգում ծնված իրարամերժ զգացմունքների հակադրությամբ: Իսկ արտաքին բախումը հերոսի և հասարակության ու նրանում տիրող աղտեղալի բարքերի միջև է:

Ներկայացնենք տեքստային աշխատանքի մի տարբերակ, որը օրինակ կարող է ծառայել հերոսի կերպարի՝ վերոնշյալ ուղղությամբ բնութագրման համար: Աշակերտներից մեկը կարդում է առաջին հատվածը. «Ամեն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում, ամեն անգամ, որ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, որի մեջ կարծես գարնանային չարաճճի վտակ էր քչքչում…. ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գործել և ամենամեծ առաքինությունը, և ամենամեծ ոճիրը-միայն թե նա հրամայեր»[2]:

Արտաքին պատկերավոր նկարագրի տակ թաքնված է նույնքան պատկերավոր, կենդանի ու զորեղ մի ուժ, որ ստիպում է դիմացինին ենթարկվել այդ ուժին: Հերոսին այդ առումով կարելի է բնութագրել որպես ամենաերջանիկը երջանիիկների մեջ: Հաջորդ հատվածում կան կենսագրական թռուցիկ տեղեկություններ. հերոսը իրավաբանական վերջին կուրսի ուսանող է՝ վառ երևակայությամբ օժտված և լի հասարակական գործունեության ու պայծառ ապագայի հեռանկարներով:

Աստիճանաբար բացահայտվում են նոր իրավիճակներ, որոնց մեջ արդեն հերոսը ներկայանում է նոր կողմերով: Աշակերտներին հանձնարարվում է հերոսի կերպարի զարգացումն արտահայտող դրությունները և նրա հոգեբանական վերափոխությունները ներկայացնել գծանկարի ձևով (տե՛ս *Աղյուսակ 1*):

Ստեղծված դրություն	Հերոսի հոգեկան աշխարհը
Սիրած աղջկանից ստանում է նամակ, որից հայտնի է դառնում, թե նա դառնալու է ուրիշի կինը:	Համակվում է անտարբերությամբ, կարծում է, թե դա կատակ է, զվարճալի խաղ, որով ուզում է փորձել իր սեռը:
Գրած նամակները մնում են անպատասխան:	Ապրում է զարմանք, ապա զայրույթ, հուսահատություն:

[2] Նույն տեղում, էջ 96-97:

Հեռագիր սիրած աղջկանից՝ «Ամուսնացա»[3]:	Նախ զգում է անտարբերություն, անզգայնություն, միաժամանակ էլ ավելի ուժգին սեր: Խոստովանում է. «Այդպես է լինում, միշտ, սիրու առարկան կրկնակի սիրելի է թվում նրան կորցնելուց հետո»[4]:

Աղյուսակ 1: Կերպարի զարգացումն արտահայտող դրությունները և նրա հոգեբանական վերափոխությունները

Հերոսի հոգեկան ամայությունը, նրա տվայտանքները արտահայտող տեքստային տարբերակը հետևյալ գեղարվեստական պատկերն է. «….այնպիսի մի դատարկություն էի զգում շուրջս ու ներսս, որ կարծես ուղեղս հանել էին գանգիցս և ինձ նետել մի անապատ՝ թափառելու սոսկալի ամայության մեջ, աննպատակ ու անդեկ, առանց ձգտումների, առանց իդեալների, առանց փրկության որևէ հույսի»[5]:

Հոգեկան այս տառապանքի մեջ աստիճանաբար հասունանում է վրեժի զգացումը. «….ես մի արծիվ էի՝ հոգով ու մտքով բարձունքներում սավառնող, այժմ դարձել էի թևերը կտրած ողորմելի մի ճնճղուկ՝ գետնի վրա ցատկոտող …. Ու վճռեցի անողոք լինել դեպի նա նույնքան, որքան անողոք եղավ նա դեպի ինձ»[6]: Հաջորդ դրությունը, որ նոր զգացում է առաջացնում հերոսի հոգում, հետևյալն է. հանդիպումը չի կայանում, որովհետև սիրած աղջիկը հարուստ ամուսնու հետ մեկնել էր արտասահման: Նա ամուսնացել է հարուստ մարդու հետ (այդ փաստն անհրաժեշտ է նաև պատմվածքի երկրորդ մասում Ջուլիետտայի կերպարը բնութագրելու, ապա՝ Լուիզայի («Արտիստը») կերպարի հետ համադրելու և նրանց նմանությունները ցույց տալու համար):

Անհագուրդ վրեժը ծնում է մի նոր զգացում՝ հուսալքում. «Ու եղավ մի րոպե, որ քիչ մնաց ձեռք բարձրացնեի ինքս ինձ վրա՝ հոգեկան անտանելի տառապանքներիս միանգամից վերջ տալու համար»[7]: Միայն այն միտքը, թե դա փոքրոգություն է, և այն հույսը, թե վաղ թե ուշ կհանդիպի սիրած էակին և կտա հասցրած անարգանքի հատուցումը, հետ է պահում նրան:

[3] Նույն տեղում, էջ 98:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղոսւմ, էջ 99:

Աստիճանաբար նախապատրաստվում է անկումը. «Կյանքի ճահիճը կամաց-կամաց ծծում էր ինձ, և ես չէի նկատում այդ: Ու, երբ նկատեցի, շատ ուշ էր. ես կորած մարդ էի արդեն»[8]: Աշակերտները համեմատելով ներկայացնում են միևնույն մարդու տարբեր գոյավիճակները բնութագրող տեքստային հատվածները և մեկնաբանում նրա արարքները (տե՛ս *Աղյուսակ 2*):

Ես	Կորած մարդ
Միշտ լավ հագնված, լայնաթիկունք, 24-25 տարեկան գեղեցիկ ուսանող…..[9]	*….կեղտից պլպլացող հնամաշ վերարկուով, մազակալած երեսով, հարբեցնողի կարմիր քթով, որի բերանից էժանագին գինու, ծխախոտի և սխտորի հոտ էր փչում….*[10]
Ոգևորված այդ ապագայով և խրախուսված երջանիկ սիրով, առանց հանգիստ առնելու պատրաստում էի ավարտական դիսերտացիաս, որը ապագա փառքիս հաստատուն հիմնաքարը պիտի հանդիսանար:[11]	*Այժմ դարձել էի…. զանազան մութ գործեր պաշտպանող, միշտ հարբած, զզվելի բոլոր բացասական հատկանիշներով:*[12]

Աղյուսակ 2: Ես-ի և «կորած մարդու» համեմատական վերլուծություն

Հերոսի արտաքին նկարագիրը և ներքին էությունը խիստ համապատասխանում են: Այս զուգահեռը լրիվ բացահայտում է երբեմնի ուսանողի բարոյական անկումը: Իսկ պատճառը արդյո՞ք կործանված սերը, սիրած աղջկա դավաճանությունն էին: Դասարանում կարելի է կազմակերպել բանավեճ (թեմա՝ «Ինչո՞ւ կործանվեց Ես-ը»): Դրա համար կարելի է օգտագործել հենց հերոսի ինքնաբնութագրող, ինքնադատապարտող մտորումները. «….ի՞նչ էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի»[13]: Այս հարցի պատասխանը աշխատում է փնտրել ինքը՝ հերոսը: Հենց նա է գտնում. «….խո չէ՞ր կարելի այդ պատճառը դժբախտ սերը համարել— մի բան, որը շատ-շատ կարող էր միայն ժամանակավորապես ընկճել, բայց ոչ առմիշտ կործանել մարդու: Դա անհեթեթություն կլիներ»[14]: Հետևում է ինքնախոստովանությունը. «….անկարելի էր, որ ես այդ աստիճան ընկնեի, եթե

[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 100:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, էջ 97:
[12] Նույն տեղում, էջ 99:
[13] Նույն տեղում, էջ 101:
[14] Նույն տեղում:

անկմանս սաղմերը չկրեի ինքս իմ մեջ: Բայց որո՞նք էին այդ սաղմերը, որտեղի՞ց էին ընկել իմ մեջ, ի՞նչ էր նրանց արմատը»[15]:

Ահա խնդիր, որ առաջարկում է կարդալ հաջորդ պատմվածքը, որ «Ես»-ին հակադրելու համար վերնագրված է «Նա»: Իսկապես Անտոնիոյի կերպարը օգնում է բացահայտելու իրավաբանականի ուսանողի անկման պատճառը: Միայն անձնական թերությունները չէին կարող անկման պատճառ լինել. այն ավելի խոր արմատներ ունի: Աշակերտների ուշադրությունն անհրաժեշտ է հրավիրել հետևյալ նկարագրության վրա. «Ես, երևի, երբեք չէի կարող այդքան շքեղորեն հագցնել նրան և զարդարել նրա ականջները, կուրծքն ու մատները շողակներով ու մարգարիտներով, որքան էլ որ արդարանային փառավոր ապագայի վրա մի ժամանակ ունեցած հույսերս»[16]: Այդ նկարագրության մեջ երևում է տվյալ հասարակության փողապաշտական էությունը, ոսկու վրա հենված փառքը, որը և պատճառ է դառնում ուրիշների դժբախտության: Նույն ձևով համադրվում են Ջուլիետտային և Անտոնիոյի կերպարները, որոնց բնութագրման համար ուսուցիչը որոնողական, հետազոտական աշխատանքներ է տալիս աշակերտներին: Տրվում է առաջադրանք՝ «Ընտրել Ջուլիետտային և Անտոնիոյին բնութագրող հատվածները, մեկնաբանել, թե ինչպիսինն է հերոսը տվյալ հատվածում»: Աշակերտները գրականության տետրում առանձնացնում են սյունակները և պատմվածքից դուրս են գրում անհրաժեշտ հատվածները՝ առաջարկվող մեկնաբանություններով (տե՛ս *Աղյուսակ 3*):

Ջուլիետտա	**Անտոնիո**
Այնքան գեղեցիկ էր նա, որ թվում էր, թե հողեղեն չէ, այլ մի հավերժահարս, որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին, ինչպես Իտալիայի ջինջ երկինքը, հայացքը զվարթ ու անհուն, ինչպես ադրիատիկի հորիզոնները: Ոսկեգույն ծամերը սքանչելի գանգուրներով պսակում էին նրա փոքրիկ, սիրունիկ գլուխը:	Նվազողը մի պատանի էր իտալական լայնեզր գլխարկով…. Ինչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խորհուն և թախծալի, ինչպես այն եղանակը, որ մի քիչ առաջ նվագում էր նա. ինչ գրավիչ դեմք,բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարի անդրի ինչ բարձր ու հպարտ ճակատ, որի վրա փայլում էր ոչ երկրային մի վեհություն:

Աղյուսակ 3: Ջուլիետտային և Անտոնիոյին բնութագրող հատվածները

[15] Նույն տեղում:
[16] Նույն տեղում, էջ 100:

Մեկնաբանություն։ Ե՛վ Ջուլիետտան, և՛ Անտոնիոն գեղեցիկ են՝ օժտված արտաքին նուրբ բարեմասնություններով։ Անտոնիոյի արտաքին նկարագրի մեջ կան բառեր (*լուրջ ու խորհուն, գունատ ու տխուր, բարձր ու հպարտ*), որոնք բնութագրում են նրա էությունը, նախապատրաստում են ընթերցողին՝ հետագա գործողությունների ժամանակ տեսնելու նրա լուրջ, խորհուն և հպարտ գործելակերպը։

«Կա՞ն Ջուլիետտայի արտաքին նկարագրի մեջ նրա էությունը բնութագրող բառեր» հարցին պատասխանելու համար աշակերտները մեջբերում են հետևյալ նկարագրությունը. «Միշտ զվարթ էր գարնան արևի պես, միշտ թռվռան թիթեռնիկի պես, միշտ չարաճճի»[17]։ «Զվարթ», «թռվռուն», «չարաճճի» որոշիչները բնութագրում են նրա թեթև, անհոգի լինելը, որ հետևանք է հարուստ կյանքի, լավ ապրելակերպի։ Ուրեմն հենց արտաքին նկարագրի մեջ այդ երկու կերպարները՝ իրենց գեղեցկությամբ հանդերձ, տարբեր են։ Հետագա բնութագրումների մեջ աշակերտները որոնում են նաև այդ տարբերությունների արմատը։ Ջուլիետտայի և Անտոնիոյի սոցիալական տարբերությունը երևում է նրանց առաջին իսկ զրույցի ընթացքում։

Ջուլիետտա	**Անտոնիո**
- Անտոնիո, ասա ինձ, ո՞վ ես դու։	-Ես որբ եմ :
- Ո՞վ է հայրդ։	-Մի բանվոր, որը մեքենայի տակ ջարդվեց և մեռավ։
- Մա՞յրդ։	-Մայրս գնաց հորս ետևից։
- Քույր չունե՞ս։	-Ոչ մի հարազատ։[18]

Մեկնաբանություն։ Անտոնիոն տխուր է, թախծոտ, որովհետև որբ է, չունի ոչ մի հարազատ։ Նա աղքատ է ու թափառական։ Իսկ Ջուլիետտան, հակառակը. «Մենք շատ հարուտ ենք»[19],- ասում է նա և ասում է հպարտությամբ։ Մեկը հպարտ է իր հարստությամբ, իսկ մյուսը. . . . «Ես շատ հպարտ եմ, սինյորինա»[20]։ Աշակերտները կարդում են այն հատվածը, որտեղ Ջուլիետտան առաջարկում է նրան ապրել իրենց տանը, չթափառել մի կտոր հացի համար, իսկ տղան հրաժարվում է. «Մենք չենք խլի քո հպարտությունը, Անտոնիո»[21]։

[17] Նույն տեղում, էջ 102։
[18] Նույն տեղում, էջ 103։
[19] Նույն տեղում։
[20] Նույն տեղում։
[21] Նույն տեղում։

Այդ հպարտությունն է, որ անբաժան ուղեկցում է Անտոնիոյին հետագա բոլոր դրություններում, որ կարելի է համառոտ շարադրել տալ աշակերտներին.

1. Խոստանում է նվագել հարուստ աղջկա պատուհանի տակ միայն գեղեցկության համար, բայց երբեք՝ դրամի:

2. Չի բարձրանում Ջուլիետտային սենյակը՝ մինչև աղջիկը հրավիրում է նրան:

3. «….մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձայնի բարձրանալ ինձ մոտ, իմ սենյակում նվագելու»[22]:

4. Անտոնիոն հպարտ է նաև այն պահին, երբ պատուհանից նետված թղթի վրա կարդում է.

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա:

Մենք վերևն ենք, դու ներքևը, էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»[23]:

Աշակերտներից մեկը կարդում է անհրաժեշտ հատվածը: «Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց ուժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թուղթը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած դրամը և, ջութակը պինդ սեղմելով վիրավոր կրծքին, հեռացավ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մեջ պարուրած»[24]:

Համեմատվում են «Ես»-ն ու «Անտոնիոն»: Ես-ը, կարդալով սիրած աղջկա նամակը, համակվում է անտարբերությամբ, հուսահատությամբ, հուսալքվում է, իսկ Անտոնիոն՝ հպարտ զայրույթով, զուսպ և ինքնատիրապետող հանգստությամբ՝ չմոռանալով ոտքով դեն հրել դրամը:

Լևոնն ու Անտոնիոն նույն միջավայրի ծնունդ են, երկուսն էլ տաղանդավոր, բայց աղքատության պատճառով՝ կյանքի հատակը նետված: Երկուսի համար էլ ապրելը պայքար է, բայց երկուսն էլ հպարտ են և համառ, երբեք չեն ստորանում ու նվաստանում: Նրանց հատուկ է պայքարի գնով երազանքն իրականացնելու ձգտումը:

Այնպես, ինչպես Ես-ը ներկայացնում է «երկու կերպարով», Անտոնիոյի կերպարի բնութագրությունը ևս երկու փուլով է կատարվում: Տարիները հաջորդում

[22] Նույն տեղում, էջ 104:
[23] Նույն տեղում, էջ 105:
[24] Նույն տեղում, էջ 106:

են միմյանց, և Վենեցիան մոռանում է այն թափառաշրջիկ պատանուն, որ սերենադներ էր նվագում փողոցներում:

Աշակերտներից մեկը կարդում է.

Անցան տարիներ:

Նորից Վենեցիան:

Քաղաքի ամբողջ մամուլն ավետեց հռչակավոր ջութակահար Անտոնիո Բոնվինիի գալուստը, որ իր միակ կոնցերտը պիտի տար մեծ թատրոնում: Վերջին ժամանակները ոչ միայն իտալական, այլև եվրոպական ու ամերիկյան ամբողջ մամուլը խոսում էր այդ նոր փայլուն աստղի մասին, որ երևացել էր երաժշտական հորիզոնի վրա:

Կոնցերտի գիշերը թատրոնում ասեղ գցելու տեղ չկար: Այնտեղ էր քաղաքի ամբողջ բարձր դասակարգը:

Անտոնիո Բոնվինի… Ամենքն անհամբեր սպասում էին նրա ելույթին:

Եվ ահա, վերջապես, դուրս եկավ նա բեմ:

Ու ամբողջ դահլիճը գրեթե միաբերան հառաչեց:

Մի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի, այն պատանի ջութակահարը….[25]

Այն, նույն Անտոնիոն, նույն հնչյունները, սակայն այս Անտոնիոն նաև տարբեր է մյուսից:

Եզրակացություն

Պատանի Անտոնիո	Անտոնիո Բոնվինի
Նվագողը մի պատանի էր, իտալական լայնեզր գլխարկով: Այնքան մեղմանուշ, դյութիչ էր նվագած եղանակը, որ Ջուլիետտան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվագում:	ՈՒ որքան այդ հնչյունները դյութիչ էին,այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը ՝ Անտոնիո Բոնվինին, բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը,հանճարեղ ճակատը, բոլորը մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում մոգական հնչյունների հետ:

Աղյուսակ 4: Անտոնիոյի կեպարի զարգացումը

«Ո՞րն է ընդհանուրը այս երկու Անտոնիոների միջև» հարցին աշակերտները պատասխանում են, որ ընդհանուրը երաժշտական հնչյունների նույն մոգական զորությունն է, և այն նվագողի նույն հպարտությունը:

[25] Նույն տեղում:

Ի՞նչ է սպասվում: Բոլոր աշակերտները համոզված ասում են, որ Ջուլիետտան ներողություն կխնդրի նրանից: Աշակերտները հիշում են նաև պատմվածքի առաջին մասում իրավաբանականի երբեմնի ուսանողի և նախկին սիրած աղջկա հանդիպումը: *Ո՞րն է այս հանդիպումների տարբերությունը, և ինչ կերպ կվարվեր Ջուլիետտան, եթե հանճարեղ ջութակահարի փոխարեն նրա առջև կանգներ կյանքի անդունդը նետված աղքատ ու խեղճ Անտոնիոն.* որոնողական այս հարցն է ուղղվում դասարանին: Աշակերտները գտնում են, որ հանդիպումների տարբերությունը հերոսներից մեկի ծայրահեղ աղքատ, մյուսի հանճարեղ, ճանաչված լինելն է: Ջոլետտան նետվում է ոչ թե Անտոնիոյի ոտքերի առջև, այլ նրա հանճարի, նրա մեծ ճանաչման: Հակառակ պարագայում նա էլ խույս կտար հանդիպումից, ինչպես Ես-ի կինը: Պատճառը մեկն է. ոչ իրավական հասարակության մեջ մարդու գնահատման չափանիշը հարստությունն է, փողը :

Իսկ ո՞րն է երկու պատանիների տարբերությունը: Անտոնիոն, ի տարբերություն Ես-ի, վրեժխնդիր է լինում միայն բարձրանալով, որովհետև նա մերժվել էր ներքևում գտնվելու պատճառով: Ներքև գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև՝ վրիժառության զգացումով լեցուն:

Թե որն է պատմվածքից բխող հիմնական գաղափարը, հիմնական եզրակացությունը, կարող են ասել՝ դեպքերի զարգացման ողջ ընթացքից ելնելով: Այդ պատասխանը տվել է Նար-Դոսը պատմվածքի վերջաբանում իր հերոսի բերանով: Վերջաբանում հեղինակը ուղղակի դիմում է բոլորին բարձրանալու՝ պայքարի մեջ տեսնելով ապրելու իսկական իմաստը. «….բարձրանալ, միշտ բարձրանալ,անդադար բարձրանալ….»[26]:

Այստեղ կա նաև դաստիարակչական մեկ այլ իրողություն. խմիչքը կարող է ամենախելացի մարդուն գլորել ճահիճը:

Պատմվածքի հիմնական գաղափարն այն է, որ ոչ իրավական հասարակական հարաբերությունները, ճղճիմ ու անմարդկային քաղքենիությունն ապագա չունեն, վերջիվերջո, հաղթելու են մարդն ու մարդկայինը: Կյանքի տիպական այս երևույթն իր արտահայտությունն է գտել պատմվածքի գեղարվեստական պատկերների, տիպական կերպարների մեջ: Պատմվածքն ունի արդիական մեծ հնչեղություն:

[26] Նույն տեղում, էջ 109:

Թեմայի ուսուցման ժամանակ կարելի է կազմակերպել բանավոր կամ գրավոր շարադրության դաս «Գեղեցիկը «Ես և նա» պատմվածքում», «Երաժշտական հնչյուններ», «Բնությունը և մարդը «Ես և նա» պատմվածքում» թեմաներով, առանձին հատվածներ հանձնարարել անգիր սովորել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքը հիանալի միջոց է աշակերտների խոսքի և գեղարվեստական մտածողության զարգացման համար: Այն դաստիարակչական մեծ ուժ ունի, որն անհրաժեշտ է օգտագործել աշակերտների մեջ գեղարվեստական ճիշտ ընկալման, գեղագիտական բարձր ճաշակի և գեղեցիկի զգացողության զարգացման համար:

Գրականության ցանկ

1. Նար-Դոս, Երկեր, Երևան, Սովետական գրող, 1977: